ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
<<ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ

19.11.2019թ

Այգևանի ալրաղաց ՍՊԸ – Ի
տնօրեն Ռ. Ղազանչյանին

Հարգելի տիկին Ռ.Ղազանչյան
Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ի միջև 08 հունվար 2019 թվականին կնքվել է **ԱՐՏՔ7Մ-ԳՀԱՊՁԲ-19/01** ծածկագրով պայմանագիր:
Ըստ որի Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ն պարտավորվել է իրականացնել սննդամթերքի / հացի/ մատակարարում :
Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 861000 /ութ հարյուր վաթսունմեկ հազար / ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:
Պայմանագրի կատարման փուլում ի հայտ են եկել բազմաթիվ անգամ խոչընդոտներ հացի մատակարարման ուշացման, հացի որակի անհամապատասխանության , որի համար բանավոր բազմաթիվ զգուշացումներ են արվել:
18.11.2019 թվականին Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ն ընթանրապես չի իրականացրել հացի մատակարարում , որի արդյունքում խաթարվել են մանկապարտեզի աշխատանքները:
18.11.2019 թվականին Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ին ուղղարկվել է ծանուցում պահանջելով պարզաբանում հացի չմատակարարման համար:
Այգևանի ալրաղաց ՍՊԸ չի պարզաբանել չմատակարարված ապրանքի պատճառները:
19.11.2019 թվականին Այգևանի ալրաղաց ՍՊԸ առանց հանձման-ընդունման արձանագրության առանց ուղեկցող փաստաթղթի իրականացրել է հացի մատակարարում որը չի ընդունվել Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ – կողմից և գրությամբ տեղեկացվել է:
Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ն բազմաթիվ անգամ խախտել է պայմանագրի 1.1 կետը :
Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի և Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ի միջև 08 հունվար 2019 թվականին կնքված **ԱՐՏՔ7Մ-ԳՀԱՊՁԲ-19/01** ծածկագրով պայմանագրի 8.11 կետով միակողմանի լուծել պայմանագիրը:
Միաժամանակ տեղեկացվում է որ Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ-ին ներկայացված պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ –ի հաշվեհամարին փոխանցելու նպատակով:
Ի հայտ են եկել Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի ա) պարբերության հանգամանքներ ըստ որի գրություն է ուղղարկվելու ֆինանսների նախարարություն Այգևանի ալրաղաց ՍՊԸ –ին գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու նպատակով:

Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ տնօրեն Կ.Մխիթարյան

Կատ. Փ.Հակոբյան

Հեռ. 077-89-91-94